

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Յիսուս՝
մեծն
շնորհալի
ուսուցիչը



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Adapted by: E. Frischbutter; Sarah S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Alastair Paterson

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2020 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.






Յիսուս մեծ
ուսուցիչ էր,
ամենաշնորհալին եւ
անսմանը: Ժողվեր
Կը լսէին իրեն:





Յիսուս ըսաւ
անոնց, որ ըլլան խղճամիտ,
բարի եւ ազնիւ: Ուրիշներ
կրնան, որ անոնց ատեն եւ վնաս
հասցնեն, բայց Աստուած
իրենց կը հոգայ:





Յիսուս նաեւ
սորվեցուց շատ
մը բաներ: Ան
ըսաւ Աստուծոյ
ժողովուրդը
աշխարհը կը
լուսաւորէ, ինչպէս
մոմը տունը կը
լուսաւորէ: Ինչ մեծ
տարբերութիւն
կ'ընէ մէկ մոմ
լման մութ
սենեակի մը մէջ:




Այդ անձերուն, որ Յիսուս կը խօսեր
վրէժխնդրութեան կը հաւատային.

"Ակն ընդ ական եւ ատամն ընդ
ատաման": Այսինքն՝

"Աչք աչքի եւ
ակռայ ակռայի":

Բայց Յիսուս
սորվեցուց,
ազնուութիւն,
ներողութիւն
եւ սէր,
նոյնիսկ
թշնամիներուն
հանդէպ:





Յիսուսի օրերուն, կարգ
մը մարդիկ շատ սուրբ կը
ձեւանային: Երբ անոնք դրամ
կու տային մուրացկաններուն,
որոշ մարդիկ կային, որոնց
փող հնչեցնել կու տային,
որպէսզի ամեն մարդ
իրենց

նայի:



"Ձեր բարի գործողութիւնները
գաղտնօրէն ըրէք եւ Աստուած
ձեզի պիտի վարձատրէ",
ըսաւ Յիսուս:



Յիսուս սորվեցուց նոյնը աղօթելու մասին: Կարգ
մը մարդիկ կ'աղօթէին աղմկարար եւ խճողուած
թաղամասերուն անկիւնները, որպէսզի ամէն մարդ
իրենց տեսնէ եւ լսէ:



Անոնք երբեք կարեւորութիւն չէին տար Աստուծոյ:
Միայն կարեւորութիւն կու տային, որ ուրիշները
ինչ կ'ըսեն իրենց մասին: Յիսուս զանոնք կոչեց

կեղծաւորներ, կեղծ
դերասաններ:



Յիսուս մեզ բնութիւնը օգտագործեց իր
ուսուցումին մէջ: Օրինակ, Ան թռչուններուն յարեց.
"Ձեր երկնաւոր հայրը կը կերակրէ
զանոնք", ըսաւ ան: "Մի՛ մտածեք
Աստուած ձեզի
ալ կը կերակրէ":



"Նոյնիսկ հարուստ Սողոմոն թագաւորը լաւ չէր
հագած, ինչպէս շուշանները", շարունակեց Յիսուս:
"Եթէ Աստուած կը հագցնէ դաշտի խոտերը, ձեզի
ալ հագուստով պիտի չհագցնէ":



Յիսուս կը սորվեցնէր ժողովուրդին, որպէսզի
վստահին Աստուծոյ, որ կը հայթայթէ ամէն իրենց
պէտքերը:



"Եթե դատես եղբայրդ. կարծես կ'ուզես
կտոր մը փայտի փոշի իր աչքեն դուրս
բերել երբ դուն խոշոր
փայտի կտոր ունիս
քու աչքիդ մէջ",
ըսաւ Յիսուս:
Թերես
ժողովուրդը
քիթերնուն
տակէն
խնդացին: Բայց
անոնք պետք
էր մտածելն
իմաստին մասին:







Յիսուս ըսաւ
Ժողովուրդը
պետք է Աստուծմէ
օգնութիւն խնդրէ:
Ձեր երկրաւոր
հայրերը երբեք քար
կու տա՞ն իրենց
անօթի զաւակին
հացի փոխարէն:
Ո՛չ: Անոնք լաւ
բաներ կու տան:
Աստուած ալ լաւ
բաներ կու տայ
անոնց, որոնք
կը խնդրեն:



Յիսուս ամենամեծ ուսուցիչը
զգուշացուց կեղծ ուսուցիչներէ:
"Անոնք ոչխարներու պէս կը յոգնին":
Յիսուս ըսաւ. "Բայց մեջէն անոնք
քայլեր են": Ան ըսաւ, որ կեղծ
ուսուցիչները կը գիտցուին իրենց
ապրելակերպով, որ կ'ապրին:




Իր պատմութեան մէջ Յիսուս ցոյց տուաւ
ժողովուրդին, թէ ով, որ Աստուծոյ խօսքին կը
հնազանդի, կը նմանի այն
մարդուն, որ տունը ժայռի
վրայ կը կառուցէ:
Սաստիկ փոթորիկ
բարձրացաւ:

Երբ այդ վերջացաւ
տունը տակաւին
ամուր մնաց:



Սակայն անհոգ մարդ մը իր տունը աւագի վրայ
կը կառուցէ: Երբ փոթորիկը բարձրանայ եւ անոր
զարնուի, ան պիտի փլի իր տկար հիմներուն
պատճառով: Յիսուս ըսաւ, ասոնք այն մարդիկ
են, որոնք չեն հնազանդիր Աստուծոյ խօսքին:



Ժողովուրդը զմայլած էր Յիսուսին
խօսքերէն: Այսպիսի բաներ անոնք
չէին լսած: Հիմա անոնք գիտէին, որ չի
բաւեր միայն Աստուծոյ խօսքը լսել:
Անոնք նաեւ պետք է նաեւ ամէն օր
հնազանդ ըլլան
Աստուծոյ:



Յիսուս՝ մեծն շնորհալի ուսուցիչը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մատթէոս 5-7, Ղուկաս 6

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ Գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

